

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մարտի 2014 թ.

N 141-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումների 2014 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## **ԾՐԱԳԻՐ**

### **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ**

#### **1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

1. Պետական անտառային ֆոնդում 2014 թվականի անտառային միջոցառումների իրականացման նպատակն է.

1) պետական անտառային ֆոնդի տարածքներում՝ ընտրելով առանձին զանգվածներ, իրականացնել անտառի սերմնային աճի օժանդակման միջոցառումներ, ստեղծել բարենպաստ պայմաններ անտառի գլխավոր և արժեքավոր տարատեսակների՝ սերմերի ծլման, աճի և զարգացման համար: Սերմերով անտառի բնական վերականգնման հաջողությունը պայմանավորված է ինչպես սերմերի քանակով և որակով, այնպես էլ նրանց ծլման ու հետագա աճի պայմաններով.

2) պետական անտառային ֆոնդի ոչ անտառաձածկ հատվածներում կատարել 1,2 հեկտար տարածքի վրա անտառատունկ՝ անտառի որակական հատկանիշների բարելավման և անտառաձածկ տարածքի ավելացման նպատակով և իրականացնել պետական անտառային ֆոնդում 2013 թվականի ընթացքում հիմնված 15 հեկտար անտառկուլտուրայի տարեկան անհրաժեշտ խնամքի աշխատանքներ, որը կապահովի տնկիների նորմալ աճը.

3) 2200 հեկտար անտառային տարածքում իրականացնել անտառային ուսումնասիրություններ, մշակել անտառաշինական նախագիծ՝ 2014 թվականի հաշվարկային հատատեղի անտառավերականգնման հատումների նշանակման և 520 հեկտար մակերեսով հատատեղերի հատկացման նպատակով.

#### **2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի իրականացմամբ կբարելավվի անտառների որակական կազմը, կբարձրացվի արտադրողականությունը և կավելացվի բնափայտի պաշարները: Անտառի բնական աճի աջակցմամբ հնարավոր կլինի ստանալ ավելի քան 80 հազար

կաղնու, հաճարենու, հացենու, լորենու և բոխու մատղաշ 100 հեկտար տարածքի վրա, կհիմնվի 1,2 հեկտար նոր անտառ:

Անտառային տնտեսության վարման նպատակով, ծրագրի շրջանակներում, կիրականացվի անտառային ուսումնասիրություններ, կմշակվի անտառաշինական նախագիծ 2014 թվականի անտառավերականգնման հատումների նշանակման, հատատեղերի հատկացման և տվյալ անտառահատվածների հետագա անտառատնտեսական աշխատանքների իրականացման համար, որը կբերի անտառային ռեսուրսների ճիշտ օգտագործմանը և հետագա վերականգնման և վերահսկելիության ապահովմանը:

### **3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում 2014 թվականի անտառային միջոցառումների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից կհատկացվի՝ 11 500 000 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ, որից՝

1) անտառատնկման միջոցառումների իրականացման համար՝ 3 830 000 (երեք միլիոն ութ հարյուր երեսուն հազար) դրամ.

2) բնափայտի բնական աճի աջակցման միջոցառումների իրականացման համար՝ 2 670 000 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասուն հազար) դրամ.

3) անտառաշինական նախագծերի մշակման միջոցառումների իրականացման համար՝ 5 000 000 (հինգ միլիոն) դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**